Արթիկում մեկնարկել է Հայաստանի դրամաշրջանառության պատմությանը նվիրված ցուցահանդեսը

16.10.2026

Արթիկում մեկնարկել է Հայաստանի դրամաշրջանառության պատմությանը նվիրված ցուցահանդեսը: Այցելուները հնարավորություն ունեն բացահայտելու հայկական դրամի պատմությունը, ծանոթանալու Կենտրոնական բանկի դրամական թողարկումներին, ինչպես նաև ստանալու օգտակար ֆինանսական գիտելիքներ:

Ցուցահանդեսը բաց է Արթիկի Վարազ Սամուելյանի անվան մշակույթի տանը մինչև հոկտեմբերի 22-ը:

Սիրով ներկայացնում ենք լուսանկարներ ցուցահանդեսի բացումից: